վանք է միայն՝ շրջապատուած մի քանի հովուական խրճիթներով։ Այդ վանքը՝ ինչպէս և շրջակայքում տպրող քրիստոնեաները՝ շատ մօտ լինելով Պարսից սահմաններին՝ ենթակայ են քուրդերի անընդհատ յարձակումներին՝ որոնք իրենց կողոպուտն անելուց յետոյ կարող են անպատիժ սահմանի միւս կողմն անցնել։

Թուսաց մի լաւ կազմակերպուած միսիոնարական յանձնախումբ՝ որ իւր գլուխ ունենալով Նորագարձ Իւնա եպիսկոպոսին հանդիսաւոր շուքով մուտք գործեց Թաւրիզ՝ սկսել է արդէն իւր գործունէութիւնը Պարսկաստանի նեստորականների մէջ։

## ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

### ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Նորին Վեհափառութիւնը ժամանեց Տաթև օգոստոս 12-ին՝ ուղեկիցների մեծ բազմութեամբ։ Վանքի արտաքին դրան առաջ սպասում էր մերձակայ գիւղերի հոգևորականութիւնը՝ որի գլուխն էր անցել Շուշուց ընդառաջ եկած Արժ. Տիրայր վարդապետը։ Տաթևում Նորին Սրբութիւնը զբաղուեցաւ զննաւորապէս վանքի անտեսական գրութիւնը դիտելով և կարգադրելով ինչ որ արժան է։ 14-ին՝ առաւօտեան 8 ժամին՝ Նորին Սրբութիւնը բարեհաճեց ուղևորուել դէպի Գեօրիս։ Ճանապարհը որքան անտառների՝ այնուամենայնիւ ծերունի Հայրապետն անցաւ առանց ձանձրանալու՝ երբեմն ձիով և երբեմն ոտքով։ Ճանապարհի կիսում Սախկալ—խութանի անտառի մէջ հալիձորցիք դիմաւորեցին Վեհափառ Հայրապետին և խնդրեցին թէկ և նախաճաշ ընդունել։ Նորին Սրբութիւնը բարեհաճեց ընդունել ժողովրդի պատրաստած նախաճաշը և երկու ժամից յետոյ շարունակեց ճանապարհը։ Այնուհետև դիմաւորեցին Երնուհայր՝ Խոթ և Քարահունջ գիւղերի բնակիչները՝ այր և կին՝ մեծ բազմութեամբ։ Սրբ. Հայրապետն իջաւ ձիուց՝ ընդունեց առաջարկուած ադն ու հացը և «պահպանիչ»ով օրհնեց ամէնքին՝ որոնք ծունկի եկած ընդունեցին իրենց Հովուապետի օրհնութիւնը։ ուղեկիցների թիւը հասաւ արդէն 200-ի։ Գեօրիսից 5 վերստ տեղ ընդառաջ էր եկել տեղւոյն գաւառապետը ժողովրդեան հետ՝ որոնց ուղեկցութեամբ Վեհ. Հայրապետը Գեօրիս մտաւ մեծ հանդիսով։ յաղթական կամար էր պատրաստուած մեծ հրապարակի վերայ՝ ուր ձիուց իջաւ և ընդունեց մատուցած ադն ու հացը։ Ցեղացի մահմեդականների դպին մի սրտառուչ ճառ ասաց այդտեղ։ ապա Նորին Սրբութիւնը կառք նստելով բարեհաճեց իջևանել Մանուչար բէկ Մելիք—Հուսէյնեանցի տանը՝ որ շքեղ կերպով զարդարուած էր թէ ներսից և թէ դրսից։ Զարդարուած էին նաև աւանի բոլոր տները դրոշակներով՝ թանկագին գորգերով և ծաղիկներով բոլոր խանութները փակ էին։ Գիշերը լուսաւորուած էր աւանը՝ և հայրապետական բնակարանի առջև խռնուում էր ժողովուրդը։

14-ի առաւօտեան Նորին Սրբութիւնը ուղևորուեց դէպի Շուշի՝ Շուշեցիների ուղարկած կառքերով։ Ճանապարհին ամէն տեղ գիւղացիները դիմաւորում էին ադ ու հացով և օրհնութիւն ստանում։ Երեկոյեան 7 ժամին Նորին Սրբութիւնը թթու ջուր հասաւ և դիշերեց պ. Ամիրսեանի բնակարանում։ Շուշուց ընդառաջ էր եկել մեծ բազմութիւն։ Վեհ. Հայրապետի ուղեկիցների բնակութեան համար վրաններ էին դրուած։ Յաջորդ օրը առաւօտեան 6 ժամին Հայրապետական գնացքն ուղևորուեց դէպի Շուշի՝ ուր և հասաւ 8 ժամին։ քաղաքի դրան առջև դիմաւորեց քաղաքապետը իրաւասուների հետ և մատոյց ադ և հաց։ արհեստաւորները իրենց դրոշակներով էին։ ժողովուրդը ծափահարել էր և խօսքի ընդարձակ նշանակութեամբ՝ ասել ձգելու տեղ չկար։ Հայրապետական գնացքը սարկուած էր կանգ առնել՝ մինչև ոստիկանութիւնը ճանապարհ բացեց։ բոլոր պատշգամբներն ու լուսամուտները լեցուած էին հանդիսատեսների բազմութեամբ՝ որոնք ծաղիկներ ցանելով Հայրապետական կառքի առաջ՝ ձայն էին տալիս։ «Կեցցէ՛ մեր Հայրիկը՝ կեցցէ՛ սի-

բելի Հայրապետը։ Գնացքը կանգ առաւ Ղազանչեցւոց եկեղեցւոյ հրապարակում՝ յաղթական կամարի մօտ, որ շատ շքեղ պատրաստուած էր։ Հոգևորականութիւնը շուրջառագգեստ սպասում էր այդտեղ։ Նորին Սրբութիւնը բարեհաճեց շուրջառ ընդունել և ամբոխանու տակ մտնելով, որ բռնել էին քաղաքի պատուաւոր անձինք, «Հրաշափառ»ով մըտաւ եկեղեցի, աղօթեց և օրհնեց ժողովրդին։ ապա վերադարձաւ իւր համար յատուկ պատրաստած բնակարանը՝ պ. Ղուկասեանների տունը։ 2 ժամ հանդիստ առնելով՝ ս. պատարագի ժամանակ իջաւ եկեղեցի։ Թէև այս անգամ ժողովուրդն աւելի մեծ էր, սակայն կարգապահութիւնն օրինակելի էր։ եկեղեցի տանող փողոցի ամբողջ երկարութեամբ կարգապահ զօրք էր կանգնեցրած։ Նորին Սրբութիւնը «Հայրմեր»ի ժամանակ քարոզ խօսեց, շեշտելով Իւր շուշեցիների տեսնելու ցանկութիւնը։ Վերադարձին ամէն բերնից լսւում էր «Կեցցէ մեր Հայրիկը»։ Վեհարանը զարդարուած էր դրոշակներով, լապտերներով ու գափնեայ թարմ ճիւղերից հիւսուած պսակներով։

Նորին Վեհափառութիւնը 17-ին, մեռելոցի օրը, ներկայ եղաւ Ազուլեաց եկեղեցում ս. պատարագին, ուր նոյնպէս քարոզ խօսեց։ Ապա այցելեց Ռուսաց եկեղեցին, մահմեդականաց մզկիթը, ռէալական ուսումնարանը, Մեղրեցւոց և ս. Յովհաննու Մկրտչի եկեղեցիները, Կուսանաց անապատը և Ժամհարեան եղբարց քաղաքին նուիրած հիւանդանոցը։ ապա բարեհաճեց Ժամհարեանների բնակարանում սուրճ վայելել։ Իսկ 20-ին, առաւօտեան 8 ժամին, ուղևորուեց դէպի Ամարասի վանքը։— Գեօրիսում, Շուշում և Հին—Նախիջևանում յանձնաժողովներ կային նշանակուած Վեհ. Հայրապետի ընդունելութեան և այլ պէտքերը հոգալու համար։ Շուշու մանուժողովի անդամներից հինգը ուղեկցում էին Շուշու վանքերն այցելելու ժամանակ և հոգում էին բոլոր պէտքերը, առանց վանքերի վերայ ծանրանալու։—Այստեղ ևս ճանապարհի մօտ գտնուած գիւղացիները բոկոտն դիմաւորում էին Վեհ. Հայրապետին, որոնց ամէնքի հետ խօսում էր հայրաբար և խրատում քրիստոնէավայել կեանք վարել։ Ամարասի վանքում Նորին Վեհափառութիւնը մնաց մի գիշեր և երեկոյեան ժամերգութեանը ներկայ եղաւ։ 21-ի առաւօտեան 10 ժամին Ամարասից ելնելով ճանապարհին Ծարտարգիւղի եկեղեցին մտաւ՝ ժողովրդի մատուցած աղն ու հացն օրհնեց և ժամը 1-ին հանդիստ առաւ Գիշի գիւղում՝ Սարգիս Մահտեսի—Բարայեանի այգում։ Պ. Յովհաննէս Քամալեանցի շերամի գործարանի մօտ, ուր ճաշեց և դիտեց գործարանը։ Գործարանի կառավարիչը մատոյց Սրբ. Հայրապետին գործարանում պատրաստուող թելերի բոլոր տեսակներից և օրհնութիւնն ստացաւ։ Ժամը 3-ին Նորին Սրբութիւնն ուղևորուեց դէպի Նոր—Շէն գիւղը, ընդունեց մատուցած աղն ու հացը, մտաւ եկեղեցի, օրհնեց ժողովրդին և իջևանեց գիւղում։ Գիշերը Նոր—Շէն գիւղը լուսաւորուած էր։ 22-ի առաւօտեան 9 ժամին Վեհ. Հայրապետն ուղևորուեց դէպի Գանձասար։ 12 ժամին հանդիստ առաւ Խրամորթ գիւղում մի գեղեցիկ պարտէզի մէջ և նախաճաշեց։ Երեկոյեան 8 ժամին հասաւ Գանձասար, ուր դիտեց շինութիւնները, հետաքրքրուեց վանքի տնտեսական դրութեամբ և կարևոր հրահանգներ տուաւ վանահօրը վանքի վերաշինութեան համար։ 25-ին առաւօտեան վանքից վերադառնալով, 12 ժամին Առաջաձորի բնակիչների կողմից հիւրասիրուեցաւ և թէյ վայելեց վանքապատկան ջրաղացների մօտ եղած հաստատմատ չինարների հովանոյ տակ։ մի ժամ չափ ևս հանդիստ առնելով Սէյդիշէն գիւղում, գիշերեց Դաշբուլաղում, ուր հասաւ երեկոյեան 8 ժամին։ Դաշբուլաղի բոլոր տներն ու փողոցները, որոնցով պէտք է անցնէր Նորին Սրբութիւնը, լուսաւորուած էին։ 26-ին Դաշբուլաղից ելնելով՝ ճանապարհին հանդիստ առաւ Խանածախ գիւղում և ժամը 12-ին հասաւ Խանքեանդի, ուր ընդառաջ էին եկել Շուշուց պատուաւոր անձինք։ Խանքեանդում ճաշեց, այցելեց Հայոց և Ռուսաց եկեղեցին և ուղեկիցների մեծ բազմութեամբ մտաւ Շուշի, ուր բոլոր եկեղեցիների զանգակները զողանջում էին։ ճանապարհին դիմաւորեցին Վեհ. Տիրոջ գաւառապետը, քաղաքագլուխը և պատուաւոր անձինք՝ ձի հեծած։

Այս անդամի մուտքը դրեթէ առաւել շքեղ էր և ընդ առաջ ելնողների բազմութիւնը շատ մեծ։ Նորին Սրբութիւնը Շուշում դրաղուեց մի քանի անհետաձգելի և կարևոր գործերով և 31-ին, կէս օրից յետոյ ժամը 2-ին, Շուշուց դուրս գալով, ուղևորուեց դէպի Գեորգիս՝ Տաթև գնալու համար։ Վեհ. Հայրապետի բնակարանի առաջ մեծ բազմութիւն էր ժողովուել. դաւառապետը, քաղաքագլուխը, իրաւասուները, արհեստաւորներն իրենց դրոշակներով սպասում էին այստեղ, և երբ Նորին Սրբութիւնը երևաց՝ ամէն բերնից լսուեց՝ «Կեցցէ Հայրիկը»։ բաժանումը սրտաշարժ էր, շատերն արտասուում էին. Նորին Ս. Օծութիւնը օրհնեց շուշեցիներին և մեծ բազմութեան ուղեկցութեամբ դուրս եկաւ քաղաքից. ժամը 4-ին հասաւ Թթու—ջուր և իջևանեց Պ. Աբրահամեանի տանը։ Իսկ սեպ. 1-ին առաւօտեան 7 ½ ժամին Թթու—ջրից ելնելով ուղևորուեց դէպի Գեորգիս։

Սրտաշարժ էր Ղարաղշլաղ գիւղի ժողովրդեան դիմաւորումը, որ մի պարարտ եզան եղջիւրների վերայ եկեղեցական մոմեր վառած, մի ամանով ցորեն ձեռքերներին ընդառաջ եկաւ Սրբ. Հայրապետին. «Հայրիկ ոտքդ դրիր մեր հողի մէջ և Աստուծոյ սիրտը անշուշտ կը-քաղցրանայ մեր վերայ, օրհնիր այս ցորեանը, որ խառնենք մեր սերմացուի հետ. օրհնիր և այս մատաղացուն, որ այս օրուան յիշատակի համար նուէր է բերում ժողովուրդը»։ Նորին Սրբութիւնը օրհնեց սերմացուն, օրհնեց մատաղացուն, օրհնեց ժողովրդին և գովեց նոցա հաւատն ու ճանապարհ ելաւ. հեռու շատ հեռու խոր ձորի մէջ լսուում էր Հայ. եկեղեցւոյ հաւատարիմ զաւակների կեցցէների ձայնը։ Հայրապետը հանդիսաւորապէս Զարուխում, ճաշեց և գիշերեց Տեղ գիւղում, ուր Գեորգիսից դաւառապետն ու ձիաւորներ ընդ առաջ էին ելել. սոցա ամէն մէկի ձեռքին ուռի թարմ ճիւղեր կային և կարմիր դրօշակը ծածանում էր օդի մէջ։ Տեղ գիւղի փոստի կայարանի առաջ հազարից աւելի մարդիկ կային։ Նորին Վեհափառութիւնը բարեհաճեց գիշերել կայարանում, ուր հասարակութիւնը ընթրիք էր պատրաստել և 2-ին, ընդառաջողների ուղեկցութեամբ, հասաւ Գեորգիս։ Այստեղ գիշերը լուսաւորութիւն կար և փոքրիկ երեխաները երկար ժամանակ երգում էին Վեհ. Հայրապետի բնակարանի առաջ։

Սեպտ. 3-ին առաւօտեան 9½ ժամին օրհնելով Գեորգիսի ժողովրդին, Նորին Սրբութիւնն ուղևորուեց դէպի Քարահունջ գիւղը և իջևանեց Ծատուրեանների տանը. այցելեց եկեղեցին, խրատեց ժողովրդին և օրհնեց Պ. Առաքել Ծատուրեանի ծնողաց գերեզմանը. ճաշից յետոյ շարունակեց ճանապարհը։ Սախկալ—Թութանի անտառում, սեպ. 14-ին Վեհ. Հայրապետի իջած տեղում, ժողովուրդը կանգնեցրել էր մի խաչքար, շուրջը վանդակապատ՝ զարդարուած խաղողի, խնձորի և տանձի գեղեցիկ շալքերով,—և խռնուած սպասում էր Նորին Սրբութեան։ Երևեցաւ Հայրապետական գնացքը, և օդը թնդաց «կեցցէ»-ների ձայնից. ոգևորութիւնը մեծ էր։ Նորին Վեհափառութիւնը իջաւ ձիուց, օրհնեց ժողովրդին և հանդիսաւորապէս միևնոյն տեղում։ Ժողովուրդը թէյ և նախաճաշ էր պատրաստել. Վեհ. Հայրապետը միայն թէյ ընդունեց, խրատեց ներկայ եղողներին, որ աշխատասէր լինեն, իրանց եկեղեցին, իրանց հաւատը ամուր պահեն. խրատեց կանանց, որ խելացի տնտես և հաւատարիմ պահապան լինեն իրանց զաւակներին ևն ևն, և երեկոյեան ժամը 6-ին հասաւ Տաթև, ըստ ամենայնի քաջառողջ։ 5-ին բարեհաճեց ելնել Տաթևից. Տաթևի գիւղում մի ժամ հանդիսաւորապէս՝ նախաճաշից և ժողովրդի թախանձանաց զիջանելով, գիշերեց Լորի գիւղում։ 6-ին Գեղաթաղ և Դարաբաղ գիւղերի միջով անցաւ և իջաւ Ուզ գիւղում, որտեղից մեծ բազմութիւն ընդ առաջ էր ելել. ճաշեց Ուզ գիւղում և գիշերեց Բռնակոթ գիւղում, և 7-ին ուղևորուեց դէպի Բիչանակ. ճանապարհին Մաղրա գիւղի ժողովուրդը այլ և կին դուրս էին եկել ընդ առաջ և գիւղից 3 վերստ հեռի իրանց գիւղի սահմանում ճաշ էին պատրաստել Սրբ. Հայրապետի համար. ամէնքն արժանացան հոգևոր Ցիրոջ օրհնութեան. մի 101-ամեայ ծերունի իւր հետաքրքիր պատմութիւնով բաւական մխիթարեց Նորին Սրբութեան։ Այստեղից ճանապարհը շարու-

նակելով՝ ժամ 5-ին հասաւ Բիչանակ, ուր սպասում էին Հին Նախիջևանի Փոխանորդն ու պատգամաւորութիւնը. Նորին Սրբութիւնը բարեհաճեց գիշերել Բիչանակում. իսկ 8 ի առաւօտեան Նախիջևանից ուղարկած կառքերով յառաջ ընթացաւ. ճանապարհին գիւղացիների խուռն բազմութիւնը ձայն էր տալիս. «Կեցցե՛ս, Հայրիկ Ջան», «արևի՛գ մեռնեմ Հայրիկ». մի քանի անձինք երգում էին «Կռունկ ուստի՞ կու գաս», ևն. ինչպէս ամէն տեղ, այստեղ ևս Նորին Սրբութիւնը իջաւ կառքից և խրատ խօսեց. ամէնքը ծունկի եկան. ապա «պահպանիչ» ասելով կառք նըստաւ. շտեղը ձայնեցին. «Բարեա՛ գնաս և շատ ապրիս, սիրելի՛ Հայրիկ»:

8 ժամին Նորին Վեհափառութիւնը մուտք գործեց Նախիջևան. ընդունելութիւնը փառահեղ էր. մեծ հրապարակի վերայ յատկական կամար էր կանգնեցրած, ուր դիմաւորեց Վեհ. Հայրապետին քաղաքագլուխը՝ ազգ ու հայ մատուցանելով և թարգման հանդիսանալով բոլոր քաղաքացիների ջեր զգացմանց. ապա մօտեցաւ զապին և ողջունեց Հայոց Հայրապետի դալուստը: Ս. Հայրապետը թափորով եկեղեցի մտաւ, օրհնեց ամէնքին և մի ժամի չափ հանգստացաւ յաջորդարանում, ուր մի բաժակ սուրճ ընդունեց, և կառք նստելով բարեհաճեց փոխադրուել յատկապէս իւր համար պատրաստուած բնակարանը: Երեկոյեան եկեղեցի /ջաւ և քարոզ ասաց. քաղաքը գիշերը լուսաւորուած էր. Նորին Վեհափառութեան բնակարանի առջև երաժշտական խումբը նուագում էր և անթիւ բազմութիւնը պրօսնում էր: Երեկոյեան Վեհ. Հայրապետը բարեհաճեց ընդունել քաղաքագլխին, իրաւասուներին և պատուաւոր անձանց: 9 ին այցելեց Հայոց և Ռուսաց եկեղեցիները և Մահմեդականների մզկիթը, և ապա ընդունեց ժողովրդեան մինչև կէս գիշեր. գիշերը դարձեալ քաղաքը լուսաւորուած էր և նուագածութիւն կար մինչև 12 ժամը: 9-ի երեկոյեան ժամերգութեան ներկայ եղաւ և քարոզ խօսեց. ապա բարեհաճեց պատուել եկեղեցւոյ երեցփոխանին Նորա տանը թէյ վայելելով: 6½ ժամին, երբ հաճեց Իւր բնակարանը վերադառնալ, հրապարակի վերայ հրախաղութիւն սկսուեցաւ և շարունակուեց մինչև 3 ժամ: 10-ի առաւօտեան 8 ժամին Նորին Սրբութիւնը ելաւ Նախիջևանից, բազմաթիւ ձիաւորների ուղեկցութեամբ. Կվրախի կայարանում ճաշեց և երեկոյեան 6 ժամին իջաւ ու գիշերեց Նորաշէնում, գաւառապետի օգնականի մօտ, որ այս մասին նախօրօք Նորին ս. Օծութեան հաճութիւնն էր խնդրել: 11 ին ուղևորուեց դէպի Խոր վիրապի վանքը ճանապարհին Դաւալու գիւղում հանդիսա առնելով. (Նորին Վեհափառութիւնը Նախիջևանից մինչև Դաւալու կառքով էր ճանապարհորդում, իսկ շքախմբի անդամները ձիով): Գիշերելով Խոր-վիրապում՝ Վեհ. Հայրապետը 12-ին գնաց վանքը, ծանօթացաւ վանքի նիւթական վիճակին և ապա ուղևորուեց դէպի Մայր Աթոռ:

## ՄԱՅՐ ԱԹՈՌ.

Նորին Վեհափառութիւն Սրբ. Հայրապետը շաբաթ սեպտ 12-ին երեկոյեան ժամերգութիւնից յետոյ ողջամբ Մայր Աթոռ հասաւ: Նորին Սրբութեան վերադարձն այնչափ յանկարծական էր, որ Միաբանութիւնը հաղիւ կարողացաւ հարմարեցրով Վեհարանի դուռը ժողովուել՝ դիմաւորելու համար, և ահա երևեցաւ Սպիտակափառ Վեհ Հովուապետը, որ այդ օր Խոր-Վիրապի վանքից ուղևորուելով՝ ճանապարհի մի մասը կառքով էր եկել, ապա ձիով, առանց ուրիշ ուղեկիցներ ունենալու հետը, բացի Իւր փոքրիկ շքախմբից: Նորին Վեհափառութիւնն ի մեծ ուրախութիւն բոլորի խիստ առոյգ էր ու զուարթ, և միայն հանդերձների վերայ նստած փոշին վկայում էր, որ երկար ճանապարհորդութիւն է արել՝ առանց յոգնածութեան այնպիսի նշաններ ցոյց տալու, որոնք բնական կլինէին Իւր կէս տարիքն ունեցողների համար: Միաբաններին Իւր ողջոյնն ու օրհնութիւնը տալուց և տաճարի դուռը համբուրելուց յետոյ՝ Վեհափառ Հայրապետն անմիջապէս հանգստանալու ելաւ և յաջորդ օրը նոյնհրախաղութիւն սկսուեցաւ և շարունակուեց մինչև 3 ժամ: 10-ի առաւօտեան 8 ժամին Նորին Սրբութիւնը ելաւ Նախիջևանից, բազմաթիւ ձիաւորների ուղեկցութեամբ. Կվրախի կայարանում ճաշեց և երեկոյեան 6 ժամին իջաւ ու գիշերեց Նորաշէնում, գաւառապետի օգնականի մօտ, որ այս մասին նախօրօք Նորին ս. Օծութեան հաճութիւնն էր խնդրել: 11 ին ուղևորուեց դէպի Խոր վիրապի վանքը ճանապարհին Դաւալու գիւղում հանդիսա առնելով. (Նորին Վեհափառութիւնը Նախիջևանից մինչև Դաւալու կառքով էր ճանապարհորդում, իսկ շքախմբի անդամները ձիով): Գիշերելով Խոր-վիրապում՝ Վեհ. Հայրապետը 12-ին գնաց վանքը, ծանօթացաւ վանքի նիւթական վիճակին և ապա ուղևորուեց դէպի Մայր Աթոռ:



## ՄԱՅՐ ԱԹՈՌ.

Նորին Վեհափառութիւն Սրբ. Հայրապետը շաբաթ սեպտ 12-ին երեկոյեան ժամերգութիւնից յետոյ ողջամբ Մայր Աթոռ հասաւ: Նորին Սրբութեան վերադարձն այնչափ յանկարծական էր, որ Միաբանութիւնը հաղիւ կարողացաւ հարմարեցրով Վեհարանի դուռը ժողովուել՝ դիմաւորելու համար, և ահա երևեցաւ Սպիտակափառ Վեհ Հովուապետը, որ այդ օր Խոր-Վիրապի վանքից ուղևորուելով՝ ճանապարհի մի մասը կառքով էր եկել, ապա ձիով, առանց ուրիշ ուղեկիցներ ունենալու հետը, բացի Իւր փոքրիկ շքախմբից: Նորին Վեհափառութիւնն ի մեծ ուրախութիւն բոլորի խիստ առոյգ էր ու զուարթ, և միայն հանդերձների վերայ նստած փոշին վկայում էր, որ երկար ճանապարհորդութիւն է արել՝ առանց յոգնածութեան այնպիսի նշաններ ցոյց տալու, որոնք բնական կլինէին Իւր կէս տարիքն ունեցողների համար: Միաբաններին Իւր ողջոյնն ու օրհնութիւնը տալուց և տաճարի դուռը համբուրելուց յետոյ՝ Վեհափառ Հայրապետն անմիջապէս հանգստանալու ելաւ և յաջորդ օրը նոյն-